

Հ Հ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏ ՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՈՒԹՅ ՈՒՆ
ԵՐ ԵՎԱՆԻ Հ Յ ՈՒՄԻ ՍՍՅ ԻՆ Հ ԱՄԱԼ ՍԱՐԱՆ

Ֆակուլտետ՝ Բանասիրություն և մանկավարժություն
Ամբիոն՝ Մանկավարժություն և հոգեբանություն
Մասնագիտություն՝ Ընդհանուր մանկավարժություն
Կրթական ծրագիր՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

Մագիստրոսական Թեզի ամփոփագիր
Թեմա՝ Դասվարի գործառույթները և աշխատանքի
առանձնահատկությունները կրտսեր դպրոցում

**The teachers functions ande the peculiarities of his job in the primary
school**

Մագիստրոս՝ Հայկուշ Գոռ Տոնոյան
Գիտական ղեկավար՝ մ. գ.թ. Ս. Հովաննիսյան

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Աշխատանքում հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասվարի աշխատանքի առանձնահատկությունների ուսումնասիրումը:

Աշխատանքի առարկան դասվարի անձի որակական հատկանիշներն են երեխաների հետ աշխատանքի ընթացքում:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել դասվարի աշխատանքի առանձնահատկությունները և մասնագիտական որակները երեխաների հետ շփվելու ընթացքում:

Աշխատանքի նպատակից բխող խնդիրներն են ներկայացնել.

- դասվարի աշխատանքի առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,
- դասվարի մասնագիտական որակները երեխաների հետ աշխատանքի ընթացքում,
- հետազոտության կազմակերպում և ընտրված մեթոդների նկարագրում,

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժության մի շարք տեսություններ, հումանիստական մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ գաղափարներ, ինչպես նաև տարբեր հեղինակների կողմից իրականացված հետազոտություններ և մենագրություններ:

Հետազոտության նորույթը և նշանակությունը: Հետազոտության նյութը կարող է մեծ նշանակություն ունենալ և հետաքրքրություն առաջացնել դասվարների շրջանակներում: Կարծում եմ, որ այս նյութը նրանք կկարողանան կիրառել իրենց աշխատանքային պրակտիկայի ընթացքում:

Հետազոտության գիտական վարկածը: Ներկայումս դասվարի աշխատանքը արդյունավետ կլինի, եթե պահպանվեն հետևյալ սկզբունքները.

- Դասվարը պետք է ունենային անձնային բարձր որակներ և պետք է կարողանա ճիշտ մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխային:

- Դասավարդ պետք է օժտված լինի մանկավարժական ընդունակություններ:
- Դասավարի աշխատանքը արդյունավետ կլինի, եթե նա յուրաքանչյուր երեխային վերաբերվի որպես հոգեբան և հաշվի առնի յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունը:

Հետազոտության փորձարկումն ու ներդրումը: Հետազոտությունը իրականացրել էմ Երևանի №163 հիմնական դպրոցում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: